

Անվտանգության ոլորտի կառավարում

Լավ կառավարման սկզբունքների կիրառումն անվտանգության ոլորտի նկատմամբ

Տեղեկագրերի շարքի մասին

Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում (Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում (անգլ.՝ «SSR Backgrounders») համառոտ ներածական տեղեկություններ են ներկայացվում անվտանգության ոլորտի լավ կառավարման («ԱՌԿ», «ԱՌԼԿ») և անվտանգության ոլորտի բարեփոխումների («ԱՌԲ») թեմաների և հասկացությունների վերաբերյալ: Տեղեկագրերի շարքում միջազգային փորձի լայն շրջանակի հիման վրա ամփոփվում են ընթացիկ քննարկումները, տրվում հիմնական հասկացությունների բացատրությունները, վերլուծվում առանցքային հակասությունները: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում չեն խորախուսվում լավ կառավարման կամ բարեփոխումների կոնկրետ մոդելներ, քաղաքականություններ կամ առաջարկություններ, փոխարենը առաջարկվում են լրացուցիչ աղբյուրներ, որոնք ընթերցողներին թույլ կտան ընդլայնել իրենց գիտելիքները թեմաներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերը տեղեկատվության օժանդակ աղբյուր են հանդիսանում անվտանգության ոլորտի կառավարմամբ և բարեփոխումներով շահագրգռված անձանց համար, ովքեր ձգտում են հասկանալ, սակայն միևնույն ժամանակ քննադատաբար գնահատել ԱՌ լավ կառավարման և ԱՌԲ-ի ներկայիս մոտեցումները:

ԱՌԲ այս տեղեկագրի մասին

ԱՌԲ այս տեղեկագիրը վերաբերում է անվտանգության ոլորտի կառավարման (ԱՌԿ) հասկացությանը: Կառավարման կոնցեպցիան հնարավորություն է տալիս հասկանալ, թե պետության ներսում ինչպես են պետական լիազորությունները և իրավասությունն իրականացվում պետության և մարդու անվտանգության նկատմամբ: Լավ կառավարման սկզբունքների կիրառումն անվտանգության ոլորտի նկատմամբ անվտանգության ոլորտի բարեփոխումների (ԱՌԲ) նպատակն է հանդիսանում:

ԱՌԲ այս տեղեկագիրը տալիս է հետևյալ հարցերի պատասխանները.

- ▶ Ի՞նչ է կառավարումը և ի՞նչ առնչություն ունի այն անվտանգության հետ **Էջ 2**
- ▶ Ի՞նչ է ԱՌ լավ կառավարումը **Էջ 3**
- ▶ Ո՞րն է ԱՌԿ-ի և ԱՌԼԿ միջև տարբերությունը **Էջ 4**
- ▶ Որո՞նք են ԱՌ լավ կառավարման հիմնական առանձնահատկությունները **Էջ 5**
- ▶ Ի՞նչ խնդիրներ է առաջացնում ԱՌ թերի կառավարումը **Էջ 6**
- ▶ Ինչո՞ւ է վերահսկողությունը կարևոր ԱՌ լավ կառավարման համար **Էջ 7**
- ▶ Ինչպե՞ս է ԱՌ լավ կառավարումն առնչվում ԱՌԲ-ի հետ **Էջ 8**

Ի՞նչ է կառավարումը և ի՞նչ առնչություն ունի այն անվտանգության հետ

Կառավարումն իշխանության և լիազորությունների իրականացումն է: «Կառավարում» եզրույթով կարելի է նկարագրել այն կանոնները, որոնցով ղեկավարվում է կազմակերպությունը (ընկերությունը կամ պետական կառույցը): «Կառավարումը», սակայն, կարող է վերաբերել նաև բոլոր այն ֆորմալ և ոչ ֆորմալ գործընթացներին, սուբյեկտներին և արժեքներին, որոնք պայմանավորում են այս կամ այն հանրային բարիքի մատուցումը: Հենց այդ՝ ավելի լայն իմաստով է կառավարման հասկացությունը կիրառելի անվտանգության առումով: **Անվտանգությունը կառավարման առումով դիտարկելն օգտակար է, քանի որ այդ կերպ ընդգծվում է, թե ինչպես են պետական և ոչ պետական տարաբնույթ սուբյեկտներն իշխանություն և լիազորություններ իրականացնում անվտանգության նկատմամբ ֆորմալ և ոչ ֆորմալ առումներով՝ միջազգային, ազգային և տեղական մակարդակներում:**

Կառավարումը հավաքական եզրույթ է, որը կարելի է կիրառել անվտանգության համար ընդհանուր առումով՝ բացատրելով, թե միջազգային, ազգային և տեղական բոլոր սուբյեկտներն ինչպես են մասնակցում անվտանգությանը վերաբերող որոշումների կերտմանը և կատարմանը: Պետության անվտանգության ոլորտում անվտանգության կառավարումը հիմնականում վերաբերում է անվտանգության ընդհանուր գործառնություններին, մինչդեռ ԱՌԿ-ը վերաբերում է պետության անվտանգության ոլորտում կոնկրետ անվտանգության վերաբերյալ որոշումներին և դրանց կատարմանը (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Կառավարումը կարող է նկարագրել անվտանգությունն ընդհանրապես կամ անվտանգությունը մեկ կոնկրետ պետության ներսում

Կառավարում

- Իշխանության և լիազորությունների իրականացում, որն ազդում է հանրային որոշակի բարիքի, օրինակ՝ առողջապահության, կրթության կամ անվտանգության տրամադրման վրա:
- Ընդհանուր հասկացություն, ներառյալ՝ կառավարության ֆորմալ որոշումները, ինչպես նաև ոչ ֆորմալ գործընթացներ, սուբյեկտներ և արժեքներ, որոնք պայմանավորում են որոշումները և դրանց իրագործումը:

Անվտանգության կառավարում

- Կառավարման հասկացություն կիրառումն անվտանգության նկատմամբ ընդհանուր առումով:
- Դիտարկում է պետական և ոչ պետական սուբյեկտները, ֆորմալ և ոչ ֆորմալ ազդեցությունները. միջազգային, ազգային և տեղական մակարդակներ:

Անվտանգության ոլորտի կառավարում

- Կառավարման հասկացությունը նկարագրում է անվտանգության ապահովումը որոշակի ազգային համատեքստում
- Դիտարկում է ազգային և տեղական մակարդակներում անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկման գործում մասնակցող բոլոր կառույցների, հաստատությունների և սուբյեկտների ֆորմալ և ոչ ֆորմալ ազդեցությունը

▶ Կառավարությունը և կառավարումը տարբեր բաներ են

Կառավարությունը կառույց է, որը կառավարում է պետությունը: Կառավարումը շատ ավելի լայն եզրույթ է, որով նկարագրվում են ցանկացած հասարակությունում հանրային բարիքի մատուցման վրա ազդող ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնները, կառույցները, նորմերը և գործընթացները: **Կառավարումն ապահովվում է կառավարությունների կողմից՝** հաշվի ունենալով այն հանգամանքը, որ կառավարությունները որոշումներ են կայացնում քաղաքականության մասին, մշակում են ռազմավարություններ, հատկացնում ռեսուրսներ և ժողովրդավարության պայմաններում ներկայացնում քաղաքացիների շահերը: Կառավարության կողմից իշխանության և լիազորությունների իրականացումն ուղղակիորեն ազդում են հանրային բարիքների, այդ թվում՝ անվտանգության ապահովման վրա:

Պետությունում, սակայն, կառավարությունը հանրային բարիքների մատուցման, հետևաբար՝ կառավարման վրա ազդող միակ սուբյեկտը չէ: **Կառավարությունները կառավարումն ապահովում են ոչ պետական սուբյեկտների հետ միասին,** օրինակ՝ կարգավորելով հանրային բարիքների, օրինակ՝ անվտանգության վրա ազդող առևտրային գործունեությունը:

Ավելին, լինում է նաև կառավարում առանց կառավարության. քանի որ ոչ պետական սուբյեկտները կարող են գործել անկախ՝ ազդելով հանրային բարիքների, ներառյալ՝ անվտանգության ապահովման վրա. օրինակ, երբ համայնքները ձևավորում են ինքնապաշտպանական խմբեր կամ կիրառում արդարադատության այլընտրանքային համակարգեր:

Անվտանգությունն օգտակար է կառավարման առումով դիտարկել, քանի որ այն ներառում է կառավարության դերը և պարտականությունները՝ միաժամանակ ընդգծելով պետական և ոչ պետական տարբեր սուբյեկտների դրական և բացասական ազդեցությունը անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության վրա:

Ի՞նչ է ԱՌ լավ կառավարումը

ԱՌ լավ կառավարումը ենթադրում է լավ կառավարման սկզբունքների կիրառությունն պետության անվտանգության ոլորտի նկատմամբ: **ԱՌ լավ կառավարման հիմքում այն գաղափարն է, որ անվտանգության ոլորտի նկատմամբ պետք է կիրառվեն հանրային ծառայությունների մատուցման նույն բարձր չափանիշները, որոնք կիրառվում են հանրային ոլորտում այլ ծառայություններ մատուցողների նկատմամբ:**

ԱՌ լավ կառավարման սկզբունքներն են.

- **Չափվելիություն.** անվտանգության ապահովման առումով կան հստակ ակնկալիքներ, անկախ մարմինները վերահսկում են այդ ակնկալիքների բավարարումը և չբավարարման դեպքում կիրառում են պատժամիջոցներ:
- **Թափանցիկություն.** տեղեկատվությունն ազատորեն մատչելի և հասանելի է նրանց համար, ովքեր կրելու են որոշումների և դրանց իրականացման ազդեցություն:
- **Իրավունքի գերակայություն.** բոլոր անձինք և հաստատությունները, ներառյալ՝ պետությունը, ենթակա են օրենքներին, որոնք հրապարակայնորեն հայտնի են, կիրառվում են անկողմնակալ կերպով և համահունչ են մարդու իրավունքների միջազգային և ազգային նորմերին և չափանիշներին:
- **Մասնակցություն.** տարբեր ծագում ունեցող բոլոր տղամարդիկ և կանայք հնարավորություն ունեն մասնակցելու որոշումների կայացմանը և ծառայությունների մատուցմանը ազատ, արդար և ներառական հիմունքներով՝ անմիջականորեն կամ իրավաչափ ներկայացուցչական ինստիտուտների միջոցով:
- **Արձագանքում.** հաստատությունները զգայուն են բնակչության բոլոր խմբերի անվտանգության տարբեր կարիքների նկատմամբ և իրենց առաքելությունները կատարում են ծառայության մատուցման մշակույթի ոգով:
- **Արդյունքայնություն.** հաստատություններն իրենց համապատասխան դերերը, պարտականությունները և առաքելությունները կատարում են բարձր պրոֆեսիոնալ մակարդակով:
- **Արդյունավետություն.** հաստատություններն իրենց համապատասխան դերերը, պարտականությունները և առաքելությունները կատարելիս առավելապես արդյունավետ են օգտագործում հանրային ռեսուրսները

▶ Անվտանգության ոլորտ

Անվտանգության ոլորտը բաղկացած է ազգային և տեղական մակարդակներում անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության համար պատասխանատու բոլոր կառույցներից, հաստատություններից և անձնակազմից՝ ներառյալ.

- **Անվտանգությունն ապահովող մարմինները,** ինչպիսիք են զինված ուժերը, ոստիկանությունը, սահմանապահները, հետախուզական ծառայությունները, քրեակատարողական և ուղղիչ հիմնարկները և անվտանգության ամբարային և ոչ պետական սուբյեկտները, ինչպես նաև բազմաթիվ ուրիշներ,
- **Անվտանգության կառավարման և վերահսկողությունն իրականացնող մարմինները,** օրինակ՝ նախարարությունները, խորհրդարանը, օրենքով նախատեսված հատուկ վերահսկողություն իրականացնող հաստատությունները, արդարադատության ոլորտի առանձին հատվածներ և քաղաքացիական հասարակության սուբյեկտներ, որոնք շահագրգռված են հանրային ծառայությունների մատուցման բարձր չափանիշներով՝ ներառյալ կանանց կազմակերպությունները, լրատվամիջոցները և այլոք:

Գոյություն ունեն անվտանգության ոլորտի տարբեր սահմանումներ, սակայն ԱՌԲ-ը հիմնված է ոլորտի լայն ընկալման վրա, որը ներառում է անվտանգությունն ապահովող, կառավարող և վերահսկող բոլոր մարմինները, ներառյալ՝ անվտանգության ռազմական և ոչ ռազմական հաստատությունները, և պետական և ոչ պետական սուբյեկտները:

Անվտանգության ոլորտին վերաբերող լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Անվտանգության ոլորտ» խորագրով ԱՌԲ տեղեկագիրը:

Ո՞րն է ԱՌԿ-ի և ԱՌԼԿ-ի միջև տարբերությունը

ԱՌԿ-ը հասկացություն է, որով նկարագրվում է պետության անվտանգության ոլորտի գործունեության վերաբերյալ իրողությունը: ԱՌԼԿ-ը նորմատիվային ստանդարտ է, որին համապատասխան պետությունը պետք է ապահովի պետության և մարդու անվտանգությունը ժողովրդավարության պայմաններում:

ԱՌ լավ կառավարման եռթյուրն է արժեքներն են. այն մասնավորապես ուղղված է լավ կառավարման սկզբունքներն ազգային մակարդակում անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության նկատմամբ կիրառմանը: ԱՌ լավ կառավարման հասկացությունը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է պետության անվտանգության ոլորտն ավելի արդյունավետ և հաշվետու դարձնել ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների

նկատմամբ հարգանքի շրջանակներում: ԱՌԿ-ը վերլուծական հասկացություն է. այն չի գնահատում արդյոք անվտանգության ոլորտի գործունեությունը համապատասխանում է լավ կառավարման կամ ժողովրդավարության սկզբունքներին, թե ոչ, և նաև չի հենվում որոշակի նորմերի կամ արժեքների նկատմամբ հանձնառության վրա: ԱՌԿ-ով պարզապես նկարագրվում է կոնկրետ պետության ազգային անվտանգության ոլորտի համատեքստում իշխանության և լիազորությունների իրականացումը:

Անվտանգության կառավարումը ԱՌԿ-ի ավելի ընդհանուր տարբերակ է, որով նույնպես նկարագրվում է իշխանության և լիազորությունների իրականացումը, սակայն՝ միջազգային անվտանգության ավելի լայն համատեքստում: Գծապատկեր 2-ում ամփոփված են այս երեք հասկացությունների միջև տարբերությունները:

Գծապատկեր 2. Տարբերություններն անվտանգության կառավարման, ԱՌԿ-ի և ԱՌԼԿ-ի միջև



Որո՞նք են ԱՌ լավ կառավարման հիմնական առանձնահատկությունները

Անվտանգության ոլորտի նկատմամբ լավ կառավարման սկզբունքների կիրառման ժամանակ պետությունը բնակչության անվտանգությունն ապահովում է արդյունավետ և հաշվետու կերպով՝ ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում: **ԱՌ լավ կառավարումը սկզբունքների ամբողջություն է, այլ ոչ՝ ինստիտուցիոնալ մոդել, և հետևաբար լավ կառավարման նույն հիմնարար սկզբունքները տարբեր կերպ են**

կիրառվում անվտանգության յուրաքանչյուր ոլորտում: ԱՌԼԿ-ի ձևավորումը մշտապես ընթացիկ հստակեցումներ պահանջող գործընթաց է անվտանգության սպառնալիքների և կարիքների փոփոխության պայմաններում: **Անվտանգության որևէ ոլորտ գերծ չէ բարելավման կարիքից:** Թեպետ անվտանգության յուրաքանչյուր ոլորտի բախվում է տարբեր սպառնալիքների և կարիքների, գոյություն ունեն ԱՌ լավ կառավարման բնորոշ մի քանի հիմնական ինստիտուցիոնալ առանձնահատկություններ (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. ԱՌ լավ կառավարման հիմնական ինստիտուցիոնալ առանձնահատկությունները

Ուժի գործադրումը սահմանված է իրավական շրջանակով

Հրապարակայնորեն հայտնի օրենքներով, հայեցակարգերով և ռազմավարություններով նախատեսվում է, թե որ դեպքերում է իրավաչափ պետության անունից ուժի գործադրումը: Հստակ սահմանված են անվտանգության պետական և ոչ պետական սուբյեկտների դերերը և պարտականությունները՝ ներառյալ ժողովրդավարական, քաղաքացիական հսկողության, վերահսկողության և պատժամիջոցների մեխանիզմները:

Անվտանգության ոլորտի հսկողությունը և կառավարումը ինստիտուցիոնալացված են (ոչ անձնավորված)

Ուղղորդման, կառավարման և վերահսկողության գործընթացները սահմանված են ընտրված կամ պատշաճ կերպով նշանակված քաղաքացիական մարմինների կողմից՝ իրավաչափ ժողովրդավարական կառույցներով, որոնք իրականացնում են հաշվետու և թափանցիկ ֆինանսական կառավարում և խթանում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Պաշտոնատար անձի անձնական շահը գործոն չի հանդիսանում հսկողության, կառավարման կամ որոշումների կայացման համար:

Անվտանգության ոլորտի ինստիտուտներն ունեն բավարար կարողություններ իրենց առաջադրանքներն արդյունավետորեն և շարունակական կերպով իրագործելու համար

Անվտանգության ոլորտն ունի կառույցներ, անձնակազմ, տեխնիկական միջոցներ և ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են պետության և անհատների ու համայնքների անվտանգության իրավաչափ կարիքները բավարարելու համար:

Անվտանգության տարբեր մասնավոր և հանրային սուբյեկտների լիազորությունները և առաքելությունները հստակ են և որոշակիացված

Անվտանգության ոլորտի սուբյեկտների միջև փոխհարաբերությունների, համակարգման և համագործակցության համար սահմանված են միարժեք և թափանցիկ մեխանիզմներ՝ նրանց դերերին և պարտականություններին համահունչ:

Անվտանգության ոլորտը գործում է հանրային ծառայության մշակույթի ոգով

Իրենց պարտականությունները կատարելիս անվտանգության ոլորտի սուբյեկտները բոլոր առումներով խթանում են միասնականությունը, բարեկարգությունը, կարգապահությունը, անկողմնակալությունը, հավասարությունը և հարգանքը բոլոր անհատների և նրանց համայնքների իրավունքների նկատմամբ:

Ի՞նչ խնդիրներ է առաջացնում ԱՌ թերի կառավարումը

Անվտանգության ոլորտի թերի կառավարումը պետության ներսում անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության նկատմամբ լավ կառավարման սկզբունքների չկիրառման հետևանք է: ԱՌ թերի կառավարումը բազմաթիվ խնդիրներ է առաջացնում անհատների և համայնքների, անվտանգության ոլորտի և ընդհանրապես քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունության համար:

Թերի ԱՌԿ-ն համակարգային ինստիտուցիոնալ խնդիրներ է առաջացնում անվտանգության ոլորտի համար: Արդյունավետ վերահսկողության, թափանցիկության և հաշվետվողականության բացակայությունն անվտանգության ոլորտում առաջացնում են կոռուպցիա, որը դժվար է արմատախիլ անել՝ հաշվի առնելով անվտանգության ուժերի անդամների և քաղաքական հաստատություններում աշխատող քաղաքացիական անձանց կողմից ստացվող անձնական օգուտները: Անարդյունավետ վերահսկողության և հաշվետվողականության պատճառով անվտանգության ոլորտը խոցելի է դառնում նաև քաղաքացիական ազդեցիկ ուժերի կողմից քաղաքական միջամտությունների և կամայական քաղաքականությունների մշակման գործընթացների նկատմամբ: Անվտանգության ոլորտում և ընդհանրապես կառավարությունում նեղ խմբերի անձնական շահերի հետապնդումը կարող է հանգեցնել անվտանգության ուժերի չափից ավելի ընդարձակման՝ ֆինանսական բեռ դարձնելով երկրի համար: Անվտանգության պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում թափանցիկության և հաշվետվողականության բացակայությունը կարող է նաև թուլացնել ազգային անվտանգության և պաշտպանության կարողությունները, ինչպես նաև՝ ներքին անվտանգությունը: Այդ թուլությունները վտանգում են պետությունը, քանի որ անվտանգության ուժերն անկարող են ապահովել ազգային կամ մարդկային անվտանգություն: Անվտանգության ծառայությունների անձնակազմի համար թերի ԱՌԿ-ն ընդհանուր առմամբ սահմանափակում է կարիերային հնարավորություններ՝ մասնագիտական զարգացման բացակայության, ծառայության ոչ բարվոք պայմանների, կոռուպցիայից կամ անձնավորված առաջխաղացման մոտեցումների պատճառով: Օրինակ, կանանց, կրոնական կամ ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության հետևանքով անվտանգության ոլորտը չի կարողանում ընտրել լավագույն թեկնածուներին կամ լավագույնս օգտագործել մարդկային ռեսուրսները: Երբ անվտանգության ուժերը չունեն հանրային լեգիտիմություն, անվտանգության ոլորտի մասնագետը կորցնում է հարգանքը և հասարակական դիրքը:

ԱՌ թերի կառավարումը վտանգում է քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունությունը: Արդյունավետ և արդյունավոր անվտանգության ոլորտը ժողովրդավարական քաղաքացիական հսկողության բացակայության պարագայում կարող է վերածվել ավտորիտար ռեժիմին օժանդակող մեխանիզմի: Այն կարող է ստանձնել տնտեսական կամ քաղաքական դերեր, որոնք սասանում են ժողովրդավարությունը, հանգեցնում կամայական որոշումների կայացման, իշխանության չարաշահման և օրենսդրական համակարգի խախտման: Անվտանգության ոլորտը, որը գործում է անպատժելիության մթնոլորտում, չի հարգում ժողովրդավարական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները, չի կարող արժանահավատ պաշտպանություն ապահովել անհատների և համայնքների համար: Նման հանգամանքներում անվտանգության կառույցները խոցելի են դառնում կոռուպցիայի և մարդու իրավունքների չարաշահումների նկատմամբ, որոնք վտանգում են բնակչությունը և ազգային զարգացումը:

▶ **ԱՌ լավ կառավարումը և ուժի իրավաչափ գործադրման պետական մենաշնորհը** ԱՌ լավ կառավարման հիմքում այն գաղափարն է, որ ուժի իրավաչափ գործադրման մենաշնորհը պատկանում է պետությանը: Սա նշանակում է, որ պետությունը հասարակությունում միակ ինստիտուտն է, որն իրավունք ունի ուժ (կամ ուժի սպառնալիք) գործադրել մարդկանց վարքի կանոնների պահպանման նպատակով:

Ուժի իրավաչափ գործադրման պետական մենաշնորհը չի նշանակում, որ պետությունը հասարակությունում ուժ գործադրող միակ սուբյեկտն է կամ իրավաչափ միակ մարմինը: Փոխարենը՝ նշանակում է, որ պետությունը միակ ինստիտուտն է, որը քաղաքական իշխանություն ունի որոշում կայացնելու այն մասին, թե երբ և ինչպես պետք է ուժն իրավաչափորեն գործադրվի՝ ելնելով հանրային շահից:

ԱՌ լավ կառավարման տեսանկյունից՝ ուժի գործադրման պետական մենաշնորհի իրավաչափությունը պայմանավորված է անվտանգության ոլորտի նկատմամբ իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում ժողովրդավարական քաղաքացիական հսկողությամբ: Ուժի իրավաչափ գործադրման պետական մենաշնորհը ԱՌ լավ կառավարման կարևոր բաղադրիչ է, քանի որ այն ցույց է տալիս, որ անվտանգությունն ապահովող պետական և ոչ պետական սուբյեկտների գործողություններն իրավաչափ են միայն այն դեպքում, երբ համապատասխանում են նշված չափանիշներին:

Խտրականության, չարաշահումների կամ հասարակ անփութության դեպքում անվտանգության կառույցները չեն կարող ապահովել բնակչության որոշ խմբերի, օրինակ ի թիվս այլոց՝ կանանց կամ որոշակի էթնիկ կամ կրոնական խմբերի համար անվտանգության նվազագույն մակարդակ: Նման դեպքերում օրենքի և հասարակական կարգի չափանիշները քայքայվում են և վերածվում տնտեսության համալ ավելացող ծախսի: Սրա հետ միասին **ԱՌ թերի կառավարման հետևանքով առաջացած ֆունկցիոնալ խանգարումները կարող են բերել քաղաքական անկայունության, տնտեսական թուլության, որոշակի խմբերի կամ համայնքների նկատմամբ անպատիժ ոտնձգությունների և չարաշահումների, անհատի և համայնքի մակարդակով նվազագույն անվտանգության բացակայության, հանցավորության բարձր մակարդակի և անզամ զինված ընդհարումների:**

Ինչու՞ է վերահսկողությունը կարևոր ԱՌ լավ կառավարման համար

ԱՌ լավ կառավարումը կախված է իրավական դաշտից, ինչպես նաև կառավարության անվտանգության քաղաքականություններից և ռազմավարություններից, որոնցով հստակորեն նախատեսվում է անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության պարտականությունների բաշխումը՝ ելնելով անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքներից: Զաղաքացիական ժողովրդավարական հսկողության համակարգում վերահսկողությունն ապահովում է անվտանգության ինստիտուտների կողմից իրենց պարտականությունների արդյունավետ և արդյունավոր կատարումը՝ լավ կառավարման սկզբունքներին համահունչ: **Վերահսկողությունը կարող է անվտանգության ուժերին պաշտպանել քաղաքական միջամտությունից՝ միաժամանակ կանխելով նրանց միջամտությունը քաղաքական գործընթացներին:**

Թեպետ անվտանգության բոլոր ոլորտները տարբեր են և չկա ԱՌ լավ կառավարման միասնական մոդել, անվտանգության ոլորտի վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգերը որպես կանոն ունեն ընդհանրություններ (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Անվտանգության ոլորտի վերահսկողության բնորոշ առանձնահատկություններ

Գործադիր իշխանությունը որոշում է անվտանգության քաղաքականությունը և անմիջական քաղաքական վերահսկողություն իրականացնում անվտանգության ծառայությունների նկատմամբ: Այն հաշվետու է քաղաքացիներին՝ հիմնականում խորհրդարանի և հերթական ընտրությունների միջոցով, սակայն նաև դատական վերահսկողության, լրատվամիջոցների հսկողության և հանրային խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

Անվտանգության ծառայություններն ի կատար են ածում կառավարության քաղաքականությունը և իրականացնում օրենքով սահմանված իրենց լիազորությունները: Ներքին կարգապահության մեխանիզմները և վերահսկողության ընթացակարգերը նպաստում են առաջադրանքի արդյունավետ և արդյունավոր կատարմանը:

Խորհրդարանը կամ **օրենսդիրը** մշակում կամ հաստատում է անվտանգության մասին օրենսդրությունը և բյուջեները, վերահսկում է անվտանգության ծառայությունների աշխատանքը և հանրային հարթակ է տրամադրում քաղաքական կուսակցություններին՝ անվտանգության քաղաքականության և միջոցառումների շուրջ քննարկումներ ծավալելու համար:

Սահմանադրական դատական մարմինը (օրինակ՝ սահմանադրական դատարանը, սահմանադրական իրավագրությամբ օժտված բարձր դատարանը կամ գերագույն դատարանը) ապահովում է անվտանգությանն առնչվող նախաձեռնությունների համապատասխանությունը գոյություն ունեցող սահմանադրական կարգին:

Արդարադատության համակարգը դատական պատասխանատվության է ենթարկում օրենքը խախտած անվտանգության ոլորտի անձնակազմի ներկայացուցիչներին և քաղաքական որոշումներ կայացնող անձանց: Այն իրականացնում է հատուկ լիազորությունների, օրինակ՝ դատարանի որոշումների կիրառման մոնիթորինգ, և որոշ դեպքերում առաջարկություններ ներկայացնում անվտանգության քաղաքականության բարելավման վերաբերյալ:

Օրենքով նախատեսված տարբեր հատուկ կառույցներ վերահսկում են անվտանգության ապահովման և կառավարման տարբեր ասպեկտները, օրինակ՝ մարդու իրավունքների հանձնաժողովները, բողոքներ քննող անկախ մարմինները, իրավապաշտպան կառույցները, ֆինանսական վերստուգում իրականացնող մարմինները, հակակոռուպցիոն հանձնաժողովները և այլն:

Անհատները, լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները զբաղվում են հետազոտությամբ, քննարկումներով, քարոզչությամբ վերապատրաստմամբ և այլ գործունեությամբ, որը կարող է անվտանգության ծառայությունների և պետության անվտանգության քաղաքականության համար վճռական կամ օժանդակող նշանակություն ունենալ: Նրանց կողմից հասարակական հսկողությունը վերահսկողության կարևոր ձև է, քանի որ այդ կերպ ներկայացվում են տարբեր տեսակետներ և կարիքներ:

Ինչպե՞ս է ԱՌ լավ կառավարումն առնչվում ԱՌԲ-ի հետ

ԱՌ լավ կառավարումն իրենից ներկայացնում է իդեալականացված սկզբունքներ և լավ գործելակերպի ամբողջություն, որին աշխարհի և ոչ մի պետություն լիովին չի համապատասխանում: Լավ կառավարման սկզբունքներն անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության չափանիշներ են, որոնցով գնահատվում են փաստացի գործելակերպերը: **ԱՌԲ-ի նպատակը ԱՌ լավ կառավարման կայացումն է:** ԱՌԲ-ն պետության և մարդկային անվտանգության բարելավման քաղաքական և տեխնիկական գործընթաց է՝ ավելի արդյունավետ և հաշվետու դարձնելով անվտանգության ապահովումը, կառավարումը և վերահսկողությունը՝ ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում:

ԱՌԲ-ն վերաբերում է անվտանգության ապահովման, կառավարման և վերահսկողության գործընթացներում ներգրավված բոլոր պետական և ոչ պետական սուբյեկտներին, ինչպես նաև ընդգծում է կապը նրանց դերերի, պարտականությունների և գործողությունների միջև: ԱՌԲ-ը ներառում է նաև արդարադատության ապահովման, կառավարման և վերահսկողության տարրեր, քանի որ անվտանգությունը և արդարադատությունը սերտորեն փոխկապակցված են:

ԱՌԲ-ն կարող է ներառել անվտանգության քաղաքական և տեխնիկական ասպեկտներին վերաբերող բարեփոխումների տարբեր միջոցառումներ, ներառյալ, ի թիվս այլոց՝ օրենսդրական նախաձեռնություններ, քաղաքականության մշակում, իրազեկության բարձրացում և հանրային տեղեկատվության քարոզարշավներ, կառավարման և վարչական կարողությունների զարգացում, ենթակառուցվածքային զարգացում, վերապատրաստման ու տեխնիկական հագեցում: **Այդուհանդերձ, անվտանգության ոլորտը բարեփոխելու նպատակով աշխատանքները ԱՌԲ կարող են համարվել միայն այն դեպքում, երբ դրանք ավելացնում են հաշվետվողականությունն ու արդյունավետությունը քաղաքացիական ժողովրդավարական հսկողության, իրավունքի գերակայության և բոլոր անհատներին վերապահված մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում:**

ԱՌԲ-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Անվտանգության ոլորտի բարեփոխումներ» խորագրով ԱՌԲ տեղեկագիրը:

▶ **ԱՌ լավ կառավարմանն առնչվող միջազգային նորմերը և ստանդարտները** 1990-ականներից ի վեր բազմակողմ և տարածաշրջանային մի շարք կազմակերպություններ ներգրավված են ԱՌ լավ կառավարման ընդունելի նորմերի և ստանդարտների սահմանման աշխատանքներին: Նրանց թվում են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Չարգացման աջակցության հանձնաժողովը, Եվրոպական միությունը (ԵՄ), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՎ), Աֆրիկյան միությունը, Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համայնքը և ՄԱԿ-ի այլ գործակալություններ: ԱՌ լավ կառավարման սկզբունքները հաստատվել են Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի 2008 և 2013 թվականների զեկույցներում, իսկ Աֆրիկյան միությունը և Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համայնքը մշակել են ԱՌ լավ կառավարման տարածաշրջանային մակարդակում կիրառելի նորմեր և ստանդարտներ:

Լրացուցիչ աղբյուրներ

Անվտանգության ոլորտի կառավարման հասկացության վերաբերյալ առավել լիարժեք տեղեկությունների համար.

- Heiner Hänggi
Making Sense of Security Sector Governance in Heiner Hänggi and Theodor H. Winkler (eds), Challenges of Security Sector Governance (Munster: LIT Verlag, 2003).
- Nicole Ball
Reforming Security Sector Governance Conflict, Security & Development, 4(3), 2004.
- Funmi ‘Olonisakin
Reforming Security Sector Governance: Comment on Nicole Ball’s Paper Conflict, Security & Development, 4(3), 2004.
- United Nations Development Programme
Democratizing Security to Prevent Conflict and Build Peace in Human Development Report 2002. Deepening Democracy in a Fragmented World (New York and Oxford: Oxford University Press, 2002, pp. 85–100).
- Gavin Cawthra and Robin Luckham
Governing Insecurity: Democratic Control of Military and Security Establishments in Transitional Democracies (London: Zed Books, 2003).

Լավ կառավարման սկզբունքներն անվտանգության ոլորտում կիրառելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար.

- UN SSR Taskforce
Democratic Governance of the Security Sector in Security Sector Reform Integrated Technical Guidance Notes (United Nations, 2012, pp. 91-116).
- OECD Development Assistance Committee **Section 7.1: Democratic Oversight and Accountability** in OECD DAC Handbook on Security System Reform: Supporting Security and Justice (Paris: Organisation for Economic Cooperation and Development, 2007, pp. 112-123).
- Nicole Ball, Tsjeard Bouta and Luc van de Goor
Enhancing Democratic Governance of the Security Sector: An Institutional Assessment Framework The Hague: Ministry of Foreign Affairs of the Netherlands, 2003.

DCAF-ի լրացուցիչ հրապարակումներ ԱՌԲ-ի վերաբերյալ

- DCAF-ը հրապարակում է տարատեսակ գործիքներ, ձեռնարկներ և ուղեցույցեր ԱՌԲ-ի և ԱՌԼԿ-ի վերաբերյալ, որոնք կարելի է անվճար ներբեռնել www.dcaf.ch կայքէջից:
Նյութերից շատերը հասանելի են անգլերենից բացի նաև այլ լեզուներով:
- The DCAF-ISSAT Community of Practice կայքէջը ԱՌԲ-ի մասնագետների համար առաջարկում է առցանց ուսուցման համար հասանելի բազմաթիվ նյութեր:
Տե՛ս <http://issat.dcaf.ch>

DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոնը հավատարիմ է պետությունների և ժողովուրդների անվտանգության բարելավմանը ժողովրդավարական կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գենդերային հավասարության շրջանակներում: 2000 թվականին իր հիմնադրումից ի վեր՝ DCAF-ը նպաստել է խաղաղության և զարգացման կայունությանը՝ օժանդակելով գործընկեր պետություններին և նրանց աջակցող միջազգային կազմակերպություններին անվտանգության ոլորտի կառավարումը ներառական և մասնակցային բարեփոխումների միջոցով բարելավելու նպատակով: DCAF-ը ստեղծում է նորարարական կրթական նյութեր, խթանում է նորմերը և դրական փորձը, տրամադրում է իրավական և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և աջակցում է անվտանգության ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի կարողությունների բարձրացմանը:

DCAF-ը երախտապարտ է հետևյալ անձանց
Պետրա Գուրթեներին՝ պատրաստման և դիզայնի համար,
Չերի Էջինսին՝ անգլերեն տարբերակի խմբագրման համար,
Լինդա Չենաֆին՝ ֆրանսերեն տարբերակի խմբագրման համար,
Ֆերնանդո Կոլասոյին՝ ծրագրային հավելվածը ստեղծելու համար:

Շարքի խմբագիր՝
Ֆերլի Չափուլի

Սույն հրապարակումից մեջբերումների համար նշել.
Geneva Centre for Security Sector Governance,
“Security Sector Governance”, SSR Backgrounder Series
(Geneva: DCAF, 2015).

© DCAF ԱՈՒԲ տեղեկագրերն անվճար կարելի է ներբեռնել www.dcaf.ch կայքէջից: Օգտագործողները կարող են կրկնօրինակել և տարածել այս նյութը՝ DCAF-ը հիշատակելու պայմանով:
Նախատեսված չէ առևտրային օգտագործման համար:



Անվտանգության ոլորտի կառավարման ժնևի կենտրոն
DCAF - Geneva Centre for Security Sector Governance
Maison de la Paix
Chemin Eugène-Rigot 2E
CH-1202 Geneva, Switzerland
Tel: +41 22 730 94 00
info@dcaf.ch
www.dcaf.ch
Twitter @DCAF_Geneva

ԱՌԲ տեղեկագրերը կարելի է ընթերցել համացանցում կամ
անվճար ներբեռնել SSR Backgrounders ծրագրային հավելվածը
բջջային հեռախոսների և պլանշետների համար.
www.ssrbackgrounders.org